ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-------» մարտի 2012թ. N ---Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 153 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի հ.153 հիմնական դպրոցն անվանակոչել բանասեր, լեզվաբան, պատմաբան, մատենագետ, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Ռաֆայել Ավետիսի Իշխանյանի անվամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ««ԵՐԵՎԱՆԻ Հ. 153 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի հ.153 հիմնական դպրոցի մանկավարժական խորհրդի 27.02.2012թ. հ.180 որոշմամբ առաջարկվել է ներկայացնել միջնորդություն՝ դպրոցը Ռաֆայել Ավետիսի Իշխանյանի անվամբ անվանակոչելու համար:

Լեզվաբան, հրապարակախոս, մատենագետ Ռաֆայել Ավետիսի Իշխանյանը ծնվել է 1922թ. Երևանում:

1939 թվականին ավարտել է Կրուպսկայայի անվան /ներկայումս Աղբալյանի անվան/ միջնակարգ դպրոցը: Որից հետո ընդունվել է Երեւանի պետական համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ֆակուլտետը:

1940 թվականին զորակոչվել է Սովետական բանակ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

Զորացրվելուց հետո՝ 1945 թվականին շարունակել է ուսումը և 1949 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը:

1954 թվականին ավարտել է Մոսկվայի գրադարանային ինստիտուտը:

1962 թվականին պաշտպանել է ատենախոսություն 1937թվականին բռնադատված հայ գրող Ակսել Բակունցի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ, որից հետո տեղափոխվել է աշխատելու Երևանի պետական համալսարան:

1973 թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

1978 թվականին ստացել է պրոֆեսորի կոչում:

1991 թվականից աշխատել է Ազգային գրադարանում որպես տնօրեն:

Իշխանյանը 773 գիտական աշխատանքների հեղինակ է:

Ռաֆայել Իշխանյանը Հայաստանի Խորհրդային հանրագիտարանի հրատարակության հեղինակներից մեկն էր:

Մահացել է 1995թ. Երևանում:

Հաշվի առնելով մանկավարժության տեսության, հայոց լեզվի և գրականության զարգացման, երիտասարդ սերնդի կրթման և դաստիարակման գործում ներդրած մեծ վաստակը, առաջարկվում է Երևան քաղաքի հ.153 հանրակրթական հիմնական դպրոցն անվանակոչել Ռաֆայել Իշխանյանի անվամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ Հ. 153 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու ««Երևան քաղաքի h.153 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ եվ/կամ/ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ Հ. 153 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևան քաղաքի h.153 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ